

## ԸՆԴՈՒՆՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական  
հանձնաժողովի խորհրդի  
2020 թվականի դեկտեմբերի 23-ի N  
121 որոշմամբ

### ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Եվրասիական տնտեսական միության «Հեղուկ և գազանման ածխաջրածինների տրանսպորտային փոխադրման համար նախատեսված մայրուղային խողովակաշարերին ներկայացնող պահանջների մասին»  
(ԵԱՏՄ ՏԿ 49/2020)

#### I. Կիրառության ոլորտը

1. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանվում են Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) մաքսային տարածքում կիրառման և կատարման համար պարտադիր՝ հեղուկ և գազանման ածխաջրածինների տրանսպորտային փոխադրման համար նախատեսված մայրուղային խողովակաշարերին ներկայացվող պահանջները՝ դրանք նախագծելիս (ներառյալ՝ ինժեներական հետազոտությունները), կառուցելիս (վերակառուցելիս), շահագործելիս (ընդունելիս և շահագործման հանձնելիս, պահպանելիս), օգտահանելիս (վերացնելիս), ինչպես նաև դրանց համապատասխանության գնահատման կանոնները:

2. Սույն տեխնիկական կանոնակարգի տեխնիկական կարգավորման օբյեկտ են համարվում մայրուղային խողովակաշարերը, այդ թվում՝ դրանց ճյուղավորումները, որոնք ունեն մինչև 1400 DN (ներառյալ) անվանական տրամագիծ, 1,2-ից մինչև 14 ՄՊա (ներառյալ) ավելցուկային ճնշում՝ հեղուկ ածխաջրածինների փոխադրման համար, և 1,2 ՄՊա-ից բարձր՝ մինչև 25 ՄՊա (ներառյալ) ավելցուկային ճնշում՝ գազանման ածխաջրածինների փոխադրման համար:

3. Սույն տեխնիկական կանոնակարգը մշակվել է մարդու կյանքի և (կամ) առողջության, գույքի, շրջակա միջավայրի, կենդանիների ու բույսերի կյանքի և

(կամ) առողջության պաշտպանության, սպառողներին մոլորության մեջ գցող գործողությունների կանխման, ինչպես նաև էներգետիկ արդյունավետության ու ռեսուրսախնայողության ապահովման նպատակներով:

4. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջները չեն տարածվում գազաբաշխիչ և գազասպառման ցանցերի խողովակաշարերի, ինքնավար գազամատակարարման ցանցերի և ավտոգազալիցքավորման ճնշակայանների խողովակաշարերի, ծովային խողովակաշարերի, արդյունագործական և միջարդյունագործական խողովակաշարերի, թեթև ածխաջրածինների լայն թորամասի և հեղուկացված ածխաջրածնային գազերի փոխադրման խողովակաշարերի, ինչպես նաև ածխաջրածնային հումքի արդյունահանման և (կամ) վերամշակման տեխնոլոգիական գործընթացների իրականացման և ապահովման համար նախատեսված խողովակաշարերի վրա:

## II. Հիմնական հասկացությունները

5. Սույն տեխնիկական կանոնակարգի կիրառման նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետևյալ իմաստը.

մայրուղային խողովակաշարի օբյեկտը շահագործման հանձնելը՝ մայրուղային խողովակաշարի սեփականատիրոջ կողմից փաստաթղթերով ձևակերպված իրադարձություն, որով ազդարարվում է ըստ նշանակության մայրուղային խողովակաշարի օբյեկտի օգտագործման մեկնարկը.

ներխողովակային արատորոշում՝ տեխնիկական արատորոշման տեսակ, որը բաղկացած է խողովակաշարի կողապատի թերությունների և առանձնահատկությունների, եռակցման կարերի և դրանց տեղադրության մասին ներխողովակային ստուգիչ սարքերի օգտագործմամբ տեղեկատվության ստացումն ապահովող համալիր աշխատանքներից, որոնցով իրագործվում են չքայքայող հսկողության համապատասխան մեթոդները.

ներխողովակային ստուգիչ սարք՝ խողովակաշարի ներսում տեղափոխվող սարքվածք, որն ապահովված է հսկողության և խողովակաշարի կողապատի թերությունների և առանձնահատկությունների, եռակցման կարերի և դրանց տեղադրության մասին տվյալների գրանցման միջոցներով.

գազաչափիչ կայան՝ մայրուղային խողովակաշարի օբյեկտ, որը

Նախատեսված է փոխադրվող գազանման ածխաջրածինների քանակը և դրանց ֆիզիկաքիմիական ցուցանիշները չափելու համար.

գազաբաշխիչ կայան՝ մայրուղային խողովակաշարի օբյեկտ, որը նախատեսված է նախքան գազանման ածխաջրածինները սպառողներին մատակարարելը շահագործման պարամետրերը կարգավորելու և պահպանելու համար.

ճնշակայան՝ մայրուղային խողովակաշարի օբյեկտ, որը նախատեսված է գազանման ածխաջրածինների՝ մայրուղային խողովակաշարի շահագործման տեխնոլոգիական ռեժիմին համապատասխան փոխադրման ժամանակ դրան միացված խողովակաշարում ճնշում ստեղծելու և այն պահպանելու համար.

մայրուղային խողովակաշարի օբյեկտի կամ դրա մի մասի կոնսերվացիա՝ մայրուղային խողովակաշարի օբյեկտի կամ դրա մի մասի շահագործման ժամանակավոր դադարեցման ժամանակահատվածում դրա աշխատունակ տեխնիկական վիճակում պահպանման ապահովմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացում.

մայրուղային խողովակաշարի օբյեկտի վերացում՝ շահագործումը դադարեցնելու, ապամոնտաժելու և (կամ) քանդելու, ինչպես նաև թափոններն օգտահանելու և մայրուղային խողովակաշարի օբյեկտի կողմից զբաղեցված տարածքը հետագա օգտագործման համար պիտանի վիճակի բերելուն ուղղված համալիր միջոցառումների իրականացում.

մայրուղային խողովակաշարի գծային մաս՝ մայրուղային խողովակաշարի օբյեկտ, որը նախատեսված է փոխադրվող հեղուկ կամ գազանման ածխաջրածինները տեղափոխելու համար, ներառում է բուն խողովակաշարը, ուղեգծի երկայնքով ձգվող էլեկտրահաղորդման գծերը, մալուխային գծերը և կապի կառույցները, կոռոզիայից պաշտպանության էլեկտրաքիմիական սարքվածքները և դրա շահագործումն ապահովող այլ կառույցներ ու տեխնիկական սարքվածքներ.

մայրուղային խողովակաշար՝ միասնական արտադրատեխնոլոգիական համալիր, որը նախատեսված է հեղուկ կամ գազանման ածխաջրածիններն ընդունման կետից մինչև սպառողներին հանձնման կետ փոխադրելու կամ հեղուկ ածխաջրածիններն ավտոմոբիլային, երկաթուղային կամ ջրային տրանսպորտի

վրա փոխաբեռնելու համար, բաղկացած է կառուցվածքապես և տեխնոլոգիապես փոխկապակցված օբյեկտներից, ներառյալ՝ մայրուղային խողովակաշարի օբյեկտների սպասարկման և կառավարման նպատակներով օգտագործվող կառույցներն ու շենքերը.

մինչև մայրուղային խողովակաշարի օբյեկտներ ընկած նվազագույն հեռավորություն՝ մայրուղային խողովակաշարի օբյեկտների կազմության մեջ չմտնող շենքերի և կառույցների նվազագույն մոտիկությունը մայրուղային խողովակաշարի օբյեկտներին, որով ապահովվում է այն վտանգավոր գործոններից դրանց պաշտպանության նվազագույն անհրաժեշտ մակարդակը, որոնք կարող են առաջանալ մայրուղային խողովակաշարի օբյեկտների շահագործման ընթացքում.

պոմպակայան (վերամղող կայան)՝ մայրուղային խողովակաշարի օբյեկտ, որը նախատեսված է խողովակաշարում ճնշում ստեղծելու և այդ ճնշումը հեղուկ ածխաջրածինների փոխադրման տեխնոլոգիական ռեժիմների պարամետրերի արժեքների նախագծային փաստաթղթերով որոշված սահմաններում պահպանելու համար.

անվանական տրամագիծ՝ չափի թվային նշում, որը հավասար է ներքին տրամագծին՝ մինչև ամբողջ թիվ կլորացմամբ, և արտահայտվում է միլիմետրերով՝ առանց չափայնության նշանակման.

մայրուղային խողովակաշարի օբյեկտ՝ մայրուղային խողովակաշարի բաղկացուցիչ մաս, որը նախատեսված է հեղուկ կամ գազանման ածխաջրածինների փոխադրման, տեխնոլոգիական պահպանման, ավտոմոբիլային, երկաթուղային կամ ջրային տրանսպորտի վրա հեղուկ ածխաջրածինների փոխաբեռնման գործընթացի ընթացքում մեկ կամ մի քանի փոխկապակցված տեխնոլոգիական գործողություններ կատարելու համար, ներառում է համապատասխան շենքերի, շինությունների և տեխնիկական սարքվածքների համալիր.

հեղուկ ածխաջրածինների փոխաբեռնման օբյեկտ՝ մայրուղային խողովակաշարի օբյեկտ, որը նախատեսված է մայրուղային խողովակաշարի գծային մասից հեղուկ ածխաջրածիններն ընդունելու, դրանք պահպանելու և

ավտոմոբիլային, երկաթուղային կամ ջրային տրանսպորտի վրա փոխաբեռնելու համար.

պահպանման գոտի՝ մայրուղային խողովակաշարի օբյեկտներին հարող տարածք կամ ջրատարածք, որը նախատեսված է մայրուղային խողովակաշարի օբյեկտների անվտանգությունն ապահովելու և դրանց շահագործման անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար, և որի շրջանակներում սահմանափակվում կամ արգելվում են դրա սահմանման նպատակների հետ անհամատեղելի գործունեության տեսակները.

սպառող՝ անձ (բեռնառաքող, բեռն ստացող), որին մատուցվում է մայրուղային խողովակաշարով հեղուկ կամ գազանման ածխաջրածինների փոխադրման ծառայություն.

մայրուղային խողովակաշարի օբյեկտի ընդունում՝ մայրուղային խողովակաշարի կառուցմամբ (վերակառուցմամբ) ավարտված օբյեկտի նախագծային փաստաթղթերի՝ սույն տեխնիկական կանոնակարգին, Միության մյուս տեխնիկական կանոնակարգերին, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա, համապատասխանության գնահատման ձև, որով հավաստվում է մայրուղային խողովակաշարի օբյեկտի՝ շահագործման հանձնելուն պատրաստ լինելը.

նավթի տաքացման կետ՝ մայրուղային խողովակաշարի օբյեկտ, որը նախատեսված է մայրուղային խողովակաշարով փոխադրելիս վերամղվող նավթի մածուցիկությունը նվազեցնելու նպատակով դրա տաքացման համար.

հեղուկ ածխաջրածինների ընդունման-հանձնման կետ՝ մայրուղային խողովակաշարի օբյեկտ, որը նախատեսված է հանձնող կողմի (կամ նրա ներկայացուցիչների) կողմից ընդունող կողմին (կամ նրա ներկայացուցիչներին) փոխանցվող հեղուկ ածխաջրածինների քանակական և ֆիզիկաքիմիական ցուցանիշները չափելու և հաշվառելու համար.

մայրուղային խողովակաշարի օբյեկտի վերանորոգում՝ մայրուղային խողովակաշարի օբյեկտի ռետուսի և (կամ) շահագործման պարամետրերի ամբողջական կամ մասնակի վերականգնմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացում.

մայրուղային խողովակաշարի սեփականատեր՝ Միության անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան մայրուղային

խողովակաշարի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող սուբյեկտ.

մայրուղային խողովակաշարերի տեխնիկական միջանցք՝ տարածք, որի վրա մեկ ուղղությամբ անցկացված են առնվազն երկու խողովակաշար՝ միմյանց հարող պահպանման գոտիներով, որոնք մտնում են մայրուղային խողովակաշարերի գծային մասերի կազմության մեջ, կամ այդ խողովակաշարերի հատվածամասերը, և որն արտաքին կողմերից սահմանափակված է մայրուղային խողովակաշարերի գծային մասերի պահպանման գոտիներով.

տեխնիկական արատորոշում՝ համալիր աշխատանքներ՝ արատորոշման օբյեկտի տեխնիկական վիճակը որոշելու համար.

տեխնիկական սարքվածք՝ տեխնիկական տարրերի (մեքենաների, սարքավորումների, դետալների) ամբողջություն, որն իրենից ներկայացնում է միասնական կառուցվածք.

մայրուղային խողովակաշարի շահագործման տեխնոլոգիական ռեժիմ՝ մայրուղային խողովակաշարով հեղուկ կամ գազանման ածխաջրածինների փոխադրման տեխնոլոգիական գործընթացի պարամետրերի արժեքների ամբողջություն, որոնք սահմանվում են նախագծային փաստաթղթերում նշված արժեքների սահմաններում.

գազանման ածխաջրածիններ՝ մայրուղային խողովակաշարով փոխադրման համար պատրաստված՝ այրվող, բնական գազեր.

հեղուկ ածխաջրածիններ՝ մայրուղային խողովակաշարով փոխադրման համար պատրաստված՝ նավթ, գազային խտուցք (կոնդենսատ), ավտոմոբիլային և ավիացիոն բենզիններ, դիզելային և նավային վառելիք, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիք.

մայրուղային խողովակաշարի սեփականատիրոջ լիազորված ներկայացուցիչ՝ Միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան՝ նրա տարածքում գրանցված իրավաբանական անձ, որը որոշվել է մայրուղային խողովակաշարի սեփականատիրոջ կողմից՝ իր անունից որոշակի գործողություններ իրականացնելու համար.

շահագործման փաստաթղթեր՝ մայրուղային խողովակաշարի օբյեկտների

շահագործման կանոնները, շահագործման պարամետրերի արժեքները սահմանող, ինչպես նաև դրանց շահագործման վերաբերյալ տեղեկություններ պարունակող փաստաթղթերի ամբողջությունը:

մայրուղային խողովակաշարի շահագործման պարամետրեր՝ մայրուղային խողովակաշարի տեխնիկական բնութագրերի ամբողջությունը, որոնք սահմանվում են նախագծային փաստաթղթերում նշված արժեքների սահմաններում:

շահագործման հսկողություն՝ համապատասխանության գնահատման ձև, որով նախատեսվում է մայրուղային խողովակաշարի օբյեկտները շահագործելիս սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին անհամապատասխանության հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացում:

մայրուղային խողովակաշարի շահագործում՝ շահագործման փաստաթղթերին համապատասխան՝ մայրուղային խողովակաշարի աշխատանքն ապահովող գործունեություն, որը ներառում է, այդ թվում՝ տեխնիկական սպասարկումը, վերանորոգումը, տեխնիկական արատորոշումը և օպերատիվ-կարգավարական կառավարումը:

շահագործող կազմակերպություն՝ Միության անդամ պետության օրենսդրությանը համապատասխան ստեղծված իրավաբանական անձ, որը սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքով իրականացնում է մայրուղային խողովակաշարի շահագործումը և պատասխանատվություն է կրում մայրուղային խողովակաշարի գործունեության կառավարման համար անհրաժեշտ անձնակազմով և նյութատեխնիկական ռեսուրսներով ապահովվող՝ մայրուղային խողովակաշարի շահագործման անվտանգության համար, ինչպես նաև դրա շահագործման պարամետրերի սպասարկման և պահպանման համար:

### III. Շահագործման հանձնելու կանոնները

6. Միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) տարածքներում շահագործման հանձնվող մայրուղային խողովակաշարերը (մայրուղային խողովակաշարերի օբյեկտները) պետք է համապատասխանեն սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին, ինչպես նաև Միության մյուս այն տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը

տարածվում է դրանց վրա:

7. Մայրուղային խողովակաշարը (մայրուղային խողովակաշարի օբյեկտը) շահագործման հանձնելիս ապահովվում է շահագործման փաստաթղթերի առկայությունը:

Շահագործման փաստաթղթերը կազմվում են շահագործող կազմակերպության կողմից՝ նախագծային փաստաթղթերի և տեխնիկական սարքվածքների, մեքենաների և սարքավորումների մատակարարման լրակազմի մեջ ընդգրկված փաստաթղթերի հիման վրա:

8. Մայրուղային խողովակաշարի օբյեկտների շահագործման հանձնումն իրականացվում է անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

#### IV. Մայրուղային խողովակաշարերին ներկայացվող պահանջները

9. Մայրուղային խողովակաշարի անվտանգությունը պետք է ապահովվի հետևյալ միջոցներով.

ա) գիտահետազոտական, տեխնոլոգիական, փորձակոնստրուկտորային և նախագծահետազոտական համալիր աշխատանքների իրականացում և մայրուղային խողովակաշարի օբյեկտների, ինչպես նաև կիրառվող տեխնոլոգիաների, տեխնիկական սարքվածքների, մեքենաների, սարքավորումների և նյութերի անվտանգության բարձրացմանը, շահագործման և էներգետիկ արդյունավետությանն ուղղված՝ դրանց արդյունքների ներդրում.

բ) մայրուղային խողովակաշարի շահագործման տեխնոլոգիական ռեժիմների պահպանում, տեխնիկական սպասարկման, տեխնիկական արատորոշման իրականացում և սահմանված շահագործման պարամետրերի պահպանում.

գ) մայրուղային խողովակաշարի օբյեկտների շահագործման պարամետրերի այն արժեքների սահմանման մասով հաշվարկների կատարում, որոնցով ապահովվում է դրանց անվտանգությունը, էներգետիկ արդյունավետությունը և ռեսուրսախնայողությունը, դրանց արդյունքների օգտագործում.

դ) սույն տեխնիկական կանոնակարգի VI բաժնի համաձայն՝ մայրուղային խողովակաշարի համապատասխանության գնահատման անցկացում.



ե) պահպանման գոտիների ստեղծում՝ N 1 հավելվածի համաձայն՝ սահմանների բնութագրերին համապատասխան.

զ) մայրուղային խողովակաշարի օբյեկտների տեխնոլոգիական գործընթացների և արտադրական գործունեության կառավարման համակարգերի հուսալիության ապահովում:

10. Մայրուղային խողովակաշարը նախագծելիս (ներառյալ՝ ինժեներական հետազոտությունները), կառուցելիս (վերակառուցելիս) պետք է պահպանվեն էներգետիկ արդյունավետության և ռեսուրսախնայողության պահանջները, որոնք գործում են անդամ պետությունների տարածքներում հետևյալ առումներով.

ա) կիրառվող կառուցվածքային, գործառնական տեխնոլոգիական, ինժեներատեխնոլոգիական լուծումներ.

բ) կիրառվող տեխնիկական սարքվածքների, սարքավորումների և նյութերի բնութագրեր.

գ) էներգետիկ ռեսուրսների ծախսի տեսակարար մեծությունը բնութագրող ցուցանիշներ:

11. Մայրուղային խողովակաշարի կազմության մեջ չմտնող՝ նախագծվող, կառուցվող կամ վերակառուցվող օբյեկտներից, շենքերից և շինություններից մինչև մայրուղային խողովակաշարը նվազագույն հեռավորության սահմանումն իրականացվում է N 2 հավելվածով սահմանված կարգով:

Սույն տեխնիկական կանոնակարգի N 2 հավելվածին համապատասխան որոշված նվազագույն հեռավորությունները կիրառվում են մայրուղային խողովակաշարերը նախագծելիս:

Սույն տեխնիկական կանոնակարգի կիրառության ոլորտի մեջ չընդգրկված կարգավորման ոլորտներում նվազագույն հեռավորությունների կիրառումը որոշվում է անդամ պետությունների օրենսդրությամբ:

12. Մայրուղային խողովակաշարի (այսուհետ՝ խողովակաշար) գծային մասում ներառված խողովակաշարերը նախագծելիս (ներառյալ՝ ինժեներական հետազոտությունները), դրանց անցկացման հիմնական եղանակը պետք է համարել ստորգետնյա անցկացումը:

խողովակաշարերի վերգետնյա (հենարանների վրա) անցկացումը

թուլյատրվում է առանձին տեղամասերում՝ անապատային և լեռնային շրջաններում, ճահճապատ տեղանքներում, լեռնային փորվածքների, սողանքների շրջաններում և բազմամյա սառած գրունտների տարածման շրջաններում, անկայուն գրունտների վրա, ինչպես նաև բնական և արհեստական խոչընդոտների միջով անցուղիների վրա, և սահմանվում է նախագծային փաստաթղթերով:

Խողովակաշարերի վերգետնյա (լիրաթմբերի միջով) անցկացումը թուլյատրվում է ճահճապատ տեղանքների առանձին հատվածամասերում, աղուտներում, բազմամյա սառած գրունտների տարածման շրջաններում և սահմանվում է նախագծային փաստաթղթերով:

13. Պետք է նախատեսվեն ստորգետնյա հատվածամասից վերգետնյա կամ գետներեսի հատվածամաս անցման վայրերում խողովակաշարի վնասումը կանխարգելող միջոցներ:

14. Բնակավայրերի տարածքներում, բնության հատուկ պահպանվող տարածքներում, խմելու ջրի մատակարարման աղբյուրների սանիտարական պահպանման գոտիներում մայրուղային խողովակաշարերի տեղադրումն իրականացվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

15. Մայրուղային խողովակաշարը նախագծելիս (ներառյալ՝ ինժեներական հետազոտությունները) պետք է հաշվի առնվեն հաշվարկային բեռնվածքները և ազդեցությունները, ինչպես նաև դրանց անբարենպաստ համակցությունները, որոնք ազդում են մայրուղային խողովակաշարի օբյեկտների ամրության և կայունության վրա:

Մայրուղային խողովակաշարի ամրության և կայունության մասով հաշվարկման սխեմաներում և հաշվարկման մեթոդներում պետք է հաշվի առնվեն դրա օբյեկտների վրա համապատասխան բեռնվածքների ազդեցության հիմնական առանձնահատկությունները:

16. Խողովակաշարը նախագծելիս պետք է նախատեսված լինեն անջատող խողովակաշարային ամրանների հանգույցներ, որոնք ապահովում են խողովակաշարում վերամղվող հեղուկ կամ գազանման ածխաջրածինների հոսքի փակումը:

Անջատող խողովակաշարային ամրանի կից հանգույցների միջև

հեռավորությունը որոշվում է նախագծային փաստաթղթերով:

17. Խողովակաշարից պոմպակայանը (վերամղող կայանը), ճնշակայանը, գազաբաշխիչ կայանն անջատող խողովակաշարային ամրանը (այդ թվում՝ սպառողի համար մատակարարումն անջատող խողովակաշարային ամրանը), գազաչափիչ կայանը, գազի ստորգետնյա պահեստները և պահեստարանային հավաքակայանները պետք է հանդերձված լինեն հեռավար հսկողության և կառավարման միջոցներով և ունենան տեղային կառավարում:

Խողովակաշարում և դրա միացման հանգույցներում վերամղվող հեղուկ կամ գազանման ածխաջրածինների հոսքը փակելու համար նախատեսված խողովակաշարային ամրանի հանդերձումը հեռավար հսկողության և կառավարման միջոցներով որոշվում է նախագծային փաստաթղթերով:

18. Մայրուղային խողովակաշարի գծային մասը նախագծելիս (ներառյալ՝ ինժեներական հետազոտությունները) պետք է նախատեսվեն խողովակաշարի երկայնական տեղաշարժերի փոխհատուցման միջոցներ:

19. Մայրուղային խողովակաշարի օբյեկտները պետք է պաշտպանված լինեն կոռոզիայի ազդեցությունից:

20. Վերգետնյա խողովակաշարը պետք է էլեկտրականորեն մեկուսացված լինի հենարաններից:

21. Ակտիվ տեկտոնական խզվածքով տեղամասերում անցկացվող մայրուղային խողովակաշարը նախագծելիս (ներառյալ՝ ինժեներական հետազոտությունները), պետք է նախատեսվեն մայրուղային խողովակաշարի անվտանգության ապահովման մասով հատուկ, ինժեներատեխնիկական լուծումներ:

22. Խողովակաշարի անցկացումը չի թուլատրվում՝

ա) երկաթուղային և ավտոմոբիլային ճանապարհների թունելներում.

բ) երկաթուղային և ավտոմոբիլային կամուրջների վրա:

23. Մայրուղային խողովակաշարի օբյեկտները նախագծելիս (ներառյալ՝ ինժեներական հետազոտությունները), կառուցելիս (վերակառուցելիս) պետք է կատարվեն այնպիսի միջոցառումներ, որոնք ապահովում են վայրի կենդանիների միգրացիայի ուղիների և դրանց մշտական բնակության վայրերի

պահպանությունը (այդ թվում՝ բազմացման և ձմեռման ժամանակահատվածներում):

24. Խողովակաշարի տեխնիկական վիճակի հսկողությունն ապահովելու համար նախագծային փաստաթղթերով պետք է նախատեսված լինեն խողովակաշարի ներքին խոռոչի մաքրման և ներխողովակային արատորոշման մասով ինժեներատեխնիկական լուծումներ:

Խողովակաշարի կառուցվածքը պետք է ապահովի հեղուկ ածխաջրածինների հաջորդական վերամղումն ապահովելու համար կիրառվող ներխողովակային մաքրման, արատորոշման, ինչպես նաև բաժանիչ սարքվածքների անխոչընդոտ անցումը, և պետք է հանդերձված լինի այդ սարքվածքների գործարկման և ընդունման հանգույցներով:

25. Ջրային արգելքի (ստորջրյա անցուղու) տակ խողովակաշարի անցկացումը նախագծելիս (ներառյալ՝ ինժեներական հետազոտությունները) պետք է նախատեսված լինեն խողովակաշարի շահագործման ընթացքում ստորջրյա անցուղու սահմաններում գրունտի էրոզիան կանխելու և խողովակաշարի կառուցման (վերակառուցման) ընթացքում տեղանքի բնական ռելիեֆի փոփոխման դեպքում ափերն ամրացնելու մասով ինժեներատեխնիկական լուծումներ:

Գրունտի էրոզիայի կանխման մասով ինժեներատեխնիկական լուծումներ նաև պետք է նախատեսվեն 20 տոկոսից բարձր թեքություն ունեցող տեղանքում խողովակաշարի անցկացումը նախագծելիս (ներառյալ՝ ինժեներական հետազոտությունները):

26. Ջրային արգելքի վրայով խողովակաշարի անցկացումը նախագծելիս (ներառյալ՝ ինժեներական հետազոտությունները) պետք է նախատեսված լինի հենարանային կառույցների ինժեներական պաշտպանություն:

27. Լեռնային տեղանքով և կտրտված ռելիեֆով տեղանքով շրջաններում անցկացվող մայրուղային խողովակաշարերը նախագծելիս (ներառյալ՝ ինժեներական հետազոտությունները) պետք է նախատեսվեն ինժեներատեխնիկական լուծումներ, որոնք կապահովեն մայրուղային խողովակաշարերի կայունությունը ջրային հոսքերի, փլվածքների, քարվեժների, սողանքների, ձնահյուսների, սելավային հոսքերի և այլ վտանգավոր երևույթների

ներգործության նկատմամբ:

28. Բազմամյա սառած գրունտների շրջաններում անցկացվող մայրուղային խողովակաշարերը նախագծելիս (ներառյալ՝ ինժեներական հետազոտությունները) պետք է որոշվեն երկրասառնագիտական և ինժեներահիդրոլոգիական տեսանկյունից ամենանպաստավոր տեղամասերը՝ տարածքի առաջանցիկ գիտաինժեներական հետազոտությունների հիման վրա, որոնք հնարավորություն են տալիս ապահովելու բազմամյա սառած գրունտների երկրասառնագիտական և ֆիզիկական հատկությունների փոփոխությունները նվազագույնի հասցնելուն ուղղված միջոցառումների անցկացումը:

29. Բազմամյա սառած գրունտների շրջաններում անցկացվող մայրուղային խողովակաշարերը նախագծելիս (ներառյալ՝ ինժեներական հետազոտությունները) պետք է նախատեսվեն ինժեներատեխնիկական լուծումներ, որոնցով կապահովվի նախագծային փաստաթղթերով սահմանված՝ մայրուղային խողովակաշարի շահագործման ջերմաստիճանային ռեժիմը և շրջակա միջավայրի վրա դրա ջերմաստիճանային ազդեցությունը նվազագույնի հասցնելը:

30. Սառը կլիմայական պայմաններ ունեցող շրջաններում հեղուկ ածխաջրածինների փոխադրման համար մայրուղային խողովակաշարը նախագծելիս (ներառյալ՝ ինժեներական հետազոտությունները) պետք է նախատեսվեն լուծումներ ջերմամեկուսացման համակարգերի և (կամ) նավթի տաքացման կետերի կիրառման մասով:

31. Նախագծային փաստաթղթերին համապատասխան մայրուղային խողովակաշարի օբյեկտները պետք է սարքավորված լինեն ստատիկ էլեկտրականության, կայծակի ուղղակի հարվածների և դրա երկրորդական դրսևորումների ազդեցությունից պաշտպանության միջոցներով:

32. Պոմպակայանները (վերամղող կայանները), ճնշակայանները և հեղուկ ածխաջրածինների փոխաբեռնման օբյեկտները պետք է ապահովված լինեն էլեկտրասնուցմամբ՝ 2 անկախ սնուցման աղբյուրներից, ինչպես նաև վթարային էլեկտրասնուցման աղբյուրներով:

33. Մայրուղային խողովակաշարի օբյեկտների հետ կապված պետք է իրականացվեն կառուցվածքային և կազմակերպչական լուծումներ դեպի այդ

օբյեկտներ չարտոնված մուտքից և դրանց ամբողջականության և անվտանգության նկատմամբ ոտնձգությունից այդ օբյեկտները պաշտպանելու մասով:

34. Մայրուղային խողովակաշարի օբյեկտների տեղակայման վայրերն ապահովվում են հատուկ նախազգուշական և տարբերիչ նշաններով, այդ թվում՝ մայրուղային խողովակաշարի օբյեկտների պահպանման գոտու մասին տեղեկություններ պարունակող նշաններով:

35. Մայրուղային խողովակաշարերը պետք է հագեցած լինեն վթարների և պատահարների կանխման, տեղայնացման և դրանց հետևանքների վերացման՝ նախագծային փաստաթղթերով սահմանվող միջոցներով:

36. Մայրուղային խողովակաշարի կամ դրա օբյեկտների կառուցման (վերակառուցման) նախագծային փաստաթղթերում փոփոխությունների կատարումն իրականացվում է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

37. Մայրուղային խողովակաշարի օբյեկտները կառուցելիս (վերակառուցելիս) պետք է անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան ձեռնարկվեն շրջակա միջավայրի պաշտպանությանը, հողերի վերամշակմանը և տարածքների բարեկարգմանը, թափոնների հետ աշխատանքին ուղղված միջոցներ:

38. Խողովակաշարի կառուցումը (վերակառուցումը) ավարտելուց հետո DN 150 և ավելի անվանական տրամագծով հեղուկ ածխաջրածինների և DN 300 և ավելի անվանական տրամագծով գազանման ածխաջրածինների փոխադրման, ինչպես նաև խողովակների փոխարինմամբ այդ խողովակաշարի հատվածամասի կրողունակությունը վերականգնելու համար նախագծային փաստաթղթերին համապատասխան կատարվում է.

ա) 1000 մ և ավելի երկարությամբ խողովակաշարի հատվածամասերի երկրաչափական պարամետրերի հսկողություն՝ դրա միջով ներխողովակային ստուգիչ սարքի ներս թողման միջոցով.

բ) 1000 մ-ից պակաս երկարությամբ խողովակաշարի հատվածամասերի երկրաչափական պարամետրերի հսկողություն՝ սարքագործիքային մեթոդներով.

գ) ներխողովակային արատորոշում.

10 000 մ և ավելի երկարությամբ խողովակաշարի հատվածամասերի,

10 000 մ-ից պակաս երկարությամբ խողովակաշարի հատվածամասերի՝ նախագծային փաստաթղթերում դրա անցկացման անհրաժեշտությունը հիմնավորելու պայմանով.

դ) ջրի հայելու 10 մ-ից ավելի նվազամակարդակի լայնության և 1,5 մ-ից ավելի խորության կամ, անկախ խորությունից, ջրի հայելու 25 մ և ավելի նվազամակարդակի լայնության գետի կամ ջրամբարի վրայով անցկացված ստորջրյա անցումների տեղամասերի ներխողովակային արատորոշում.

ե) մեկուսիչ պատվածքի վիճակի հսկողություն:

39. Կառուցումը (վերակառուցումը) ավարտելուց հետո պետք է փորձարկվի նոր մոնտաժված խողովակաշարի կայունությունը և ստուգվի դրա հերմետիկությունը:

Խողովակաշարը վերանորոգելիս պետք է փորձարկվի փոխարինվող հատվածամասի կայունությունը և ստուգվի դրա հերմետիկությունը:

40. Մայրուղային խողովակաշարը շահագործելիս հարկավոր է ապահովել.

ա) մայրուղային խողովակաշարի շահագործման պարամետրերի պահպանումը.

բ) մայրուղային խողովակաշարի տեխնիկական վիճակի հսկողության, այդ թվում՝ տեխնիկական արատորոշման անցկացումը, հեղուկ կամ գազանման ածխաջրածինների և գազի վտանգավոր կոնցենտրացիայի՝ նախագծային փաստաթղթերին համապատասխան հսկողությունը, ինչպես նաև շահագործման հսկողության անցկացումը.

գ) մայրուղային խողովակաշարի վրա հնարավոր վթարների ու պատահարների կանխմանը, դրանց տեղայնացմանն ու հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների կատարումը.

դ) անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան արտակարգ իրավիճակների կանխարգելմանը և շրջակա միջավայրի պաշտպանությանը ներկայացվող պահանջների կատարումը.

ե) նախագծային փաստաթղթերով սահմանված՝ մայրուղային խողովակաշարի էներգատարության և էներգետիկ արդյունավետության ցուցանիշների պահպանումը:

41. Գազաչափիչ կայանների և հեղուկ ածխաջրածինների ընդունման-հանձնման կետերի կազմության մեջ մտնող, կամ մայրուղային խողովակաշարի պահպանման գոտիները և դրա կազմության մեջ չմտնող օբյեկտներից, շենքերից ու կառույցներից մինչև մայրուղային խողովակաշար նվազագույն հեռավորությունները որոշելու համար կիրառվող չափման միջոցներն ու չափիչ գործառույթներով տեխնիկական համակարգերը և սարքվածքները, ինչպես նաև չափման մեթոդիկաները (մեթոդները) չափումների միասնականության ապահովման ոլորտում պետական կարգավորման, այդ թվում՝ պետական չափագիտական հսկողության (վերահսկողության) օբյեկտներ են, և պետք է համապատասխանեն այն անդամ պետության չափումների միասնականության ապահովման ոլորտի օրենսդրությանը, որի տարածքում դրանք կիրառվում են, և չափումների միասնականության ապահովման ոլորտում Միության իրավունքին:

42. Չի թույլատրվում կողմնակի կազմակերպությունների (անձանց) կողմից աշխատանքների (գործողությունների, միջոցառումների) իրականացումը մայրուղային խողովակաշարի պահպանման գոտում՝ առանց մայրուղային խողովակաշարի սեփականատիրոջ կամ նրա լիազորված ներկայացուցչի գրավոր համաձայնությունն ստանալու:

43. Արգելվում է սահմանափակել անձնակազմի, մայրուղային խողովակաշարի սեփականատիրոջ կամ դրա լիազորված ներկայացուցչի տրանսպորտային միջոցների մուտքը մայրուղային խողովակաշարի պահպանման գոտի՝ մայրուղային խողովակաշարի տեխնիկական սպասարկման կամ վերանորոգման, վթարավերականգնողական, վթարափրկարարական աշխատանքների և (կամ) վթարների և պատահարների հետևանքների վերացման աշխատանքների կատարման նպատակով:

44. Մայրուղային խողովակաշարի պահպանման գոտու օգտագործման պայմանները և շահագրգիռ անձանց փոխգործակցության կարգը սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությամբ:

45. Մայրուղային խողովակաշարի կառուցման (վերակառուցման) նախագծային և կատարողական փաստաթղթերը, շահագործման



փաստաթղթերը, ինչպես նաև վթարների և պատահարների քննության կյուրթերը պետք է պահվեն մայրուղային խողովակաշարի սեփականատիրոջ կամ շահագործող կազմակերպության մոտ՝ խողովակաշարի շահագործման ամբողջ ժամանակահատվածում:

46. Մայրուղային խողովակաշարի օբյեկտի կամ դրա մի մասի կոնսերվացիայի աշխատանքները նախագծելիս և կատարելիս պետք է նախատեսվեն միջոցներ, որոնք ապահովում են կոռոզիայից պաշտպանությունը, քայքայման և կոնսերվանտի հոսակորստի առաջացման կանխումը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, պայթյունապտանգ խառնուրդի, հիդրատների սահմանային թուլլատրելի կոնցենտրացիայի առաջացման և կոնսերվանտի սառչելու հնարավորության բացառումը, մայրուղային խողովակաշարի օբյեկտի (դրա մի մասի) նկատմամբ հսկողության իրականացումը՝ կոնսերվացիայի վիճակում դրա գտնվելու և ապակոնսերվացիայից հետո՝ մայրուղային խողովակաշարի օբյեկտը (դրա մի մասը) շահագործման հանձնելու ամբողջ ժամանակահատվածում:

47. Մայրուղային խողովակաշարի օբյեկտի օգտահանման (վերացման) աշխատանքները նախագծելիս և կատարելիս պետք է նախատեսվեն միջոցներ, որոնք ապահովում են խախտված հողերի վերամշակումը, թափոնների օգտահանումը, օգտահանման (վերացման) օբյեկտի ազդեցության գոտում տեղակայված շենքերի և շինությունների վնասների կանխումը, ինչպես նաև ընդերքի և ջրային օբյեկտների աղտոտման կանխումը:

#### V. Տեխնիկական կանոնակարգի պահանջներին մայրուղային խողովակաշարի համապատասխանության ապահովումը

48. Սույն տեխնիկական կանոնակարգին մայրուղային խողովակաշարի համապատասխանությունն ապահովվում է կամ անմիջականորեն դրա պահանջների կատարման եղանակով, կամ միջազգային և տարածաշրջանային (միջպետական) ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազգային (պետական) ստանդարտների ցանկում ներառված ստանդարտների դրույթների կատարման ճանապարհով, որոնց կամավոր հիմունքով կիրառման արդյունքում

ապահովվում է սույն տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանումը:

49. Հետազոտությունների (փորձարկումների) և չափումների մեթոդները սահմանվում են միջազգային և տարածաշրջանային (միջպետական) այն ստանդարտների ցանկում ներառված ստանդարտներում, որոնք պարունակում են սույն տեխնիկական կանոնակարգի պահանջների կիրառման ու կատարման և տեխնիկական կանոնակարգման օբյեկտների համապատասխանության գնահատման համար անհրաժեշտ՝ հետազոտությունների (փորձարկումների) և չափումների կանոններ ու մեթոդներ, այդ թվում՝ նմուշառման կանոններ:

#### VI. Տեխնիկական կանոնակարգի պահանջներին մայրուղային խողովակաշարի համապատասխանության գնահատումը

50. Մայրուղային խողովակաշարի՝ սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության գնահատումն իրականացվում է հետևյալ ձևերով՝

ա) նախագծային փաստաթղթերի փորձաքննություն (ներառյալ՝ ինժեներական հետազոտությունների արդյունքները)՝ նախագծման ժամանակ (ներառյալ՝ ինժեներական հետազոտությունները).

բ) շինարարական հսկողություն (տեխնիկական վերահսկողություն), հեղինակային և պետական վերահսկողություն՝ կառուցման (վերակառուցման) ժամանակ.

գ) ընդունում կառուցման (վերակառուցման) ավարտի ժամանակ.

դ) շահագործման հսկողություն, պետական հսկողություն (վերահսկողություն)՝ շահագործման ժամանակ.

ե) շինարարական հսկողություն և հեղինակային վերահսկողություն՝ օգտահանման (վերացման) ժամանակ:

51. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին մայրուղային խողովակաշարի համապատասխանության գնահատման ձևերի կիրառման կարգը սահմանվում է անդամ պետությունների օրենսդրությամբ:

52. Համապատասխանության գնահատում իրականացնելիս կիրառվում են այն չափումների միջոցները և չափումների մեթոդիկաները (մեթոդները), որոնք հանդիսանում են չափումների միասնականության ապահովման ոլորտում, այդ թվում՝ պետական չափագիտական հսկողության (վերահսկողության) ոլորտում պետական կարգավորման օբյեկտներ և համապատասխանում են այն անդամ պետության օրենսդրությամբ սահմանված պարտադիր չափագիտական և տեխնիկական պահանջներին, որի տարածքում դրանք կիրառվում են, ինչպես նաև չափումների միասնականության ապահովման ոլորտում Միության մարմինների՝ չափումների միասնականության ապահովման մասով աշխատանքների արդյունքների փոխադարձ ընդունման վերաբերյալ ակտերի դրույթներին:

53. Ընդունման ենթակա են մայրուղային խողովակաշարի այն օբյեկտները, որոնց կառուցումը (վերակառուցումը) ավարտին է հասցվել:

54. Մայրուղային խողովակաշարի (մայրուղային խողովակաշարի օբյեկտի) ընդունումը կառուցման (վերակառուցման) ավարտից հետո անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան իրականացվում է ինչպես ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին հերթերով և ավարտվում է մայրուղային խողովակաշարի (մայրուղային խողովակաշարի օբյեկտի) ընդունման ակտի ձևակերպմամբ:

55. Մայրուղային խողովակաշարի օբյեկտի ընդունումն իրականացվում է կատարողական փաստաթղթերի, ինչպես նաև համալիր նմուշափորձման, տեխնիկական արատորոշման, փորձարկումների արդյունքների հիման վրա, որոնք հավաստում են ընդունվող մայրուղային խողովակաշարի օբյեկտի համապատասխանությունը նախագծային փաստաթղթերին և սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

56. Շինմոնտաժային աշխատանքների այն թերությունների վերացումը, որոնց պարամետրերը չեն համապատասխանում նախագծային փաստաթղթերով սահմանված արժեքներին և որոնք հայտնաբերվել են մայրուղային խողովակաշարի օբյեկտի ընդունման և երաշխիքային ժամկետում դրա շահագործման ընթացքում, կատարվում է մայրուղային խողովակաշարի տվյալ օբյեկտի կառուցումը (վերակառուցումը) իրականացնող շինմոնտաժային կազմակերպության կողմից:

57. Արգելվում է մայրուղային խողովակաշարը (մայրուղային խողովակաշարի օբյեկտը) ընդունելը և շահագործման հանձնելը՝ առանց նախագծային փաստաթղթերի մասով անհամապատասխանությունները վերացնելու, ինչպես նաև առանց ավարտելու այն անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքները, որոնց տարածքներում տեղակայվել է մայրուղային խողովակաշարը (մայրուղային խողովակաշարի օբյեկտը):

58. Շահագործման հսկողությունն իրականացվում է շահագործող կազմակերպությունների կողմից:

#### VII. Մայրուղային խողովակաշարի մակնշումը Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով

59. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանող և կառուցման (վերակառուցման) ավարտից հետո ընդունման ձևով համապատասխանության գնահատման ընթացակարգ անցած մայրուղային խողովակաշարը (մայրուղային խողովակաշարի օբյեկտը) մակնշվում է Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով: Միության շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը դրվում է մայրուղային խողովակաշարի (մայրուղային խողովակաշարի օբյեկտի) ընդունման ակտի առաջին թերթի վերևի ձախ մասում:

#### VIII. Եզրափակիչ դրույթներ

60. Սույն տեխնիկական կանոնակարգի 12-32-րդ, 38-րդ, 45-րդ կետերով սահմանված պահանջները չեն կիրառվում հետևյալի նկատմամբ՝

ա) սույն տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից առաջ շահագործման հանձնված՝ մայրուղային խողովակաշարի օբյեկտներ.

բ) մայրուղային խողովակաշարի օբյեկտներ, որոնց կառուցումը (վերակառուցումը) իրականացվում է նախքան սույն տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելը հաստատված կամ պետական փորձաքննության

ուղարկված նախագծային փաստաթղթերին համապատասխան.

գ) մայրուղային խողովակաշարի օբյեկտներ, որոնց կառուցման (վերակառուցման) թույլտվությունն ստացվել է կամ որոնց կառուցման (վերակառուցման) մեկնարկի մասին ծանուցումը տրվել է նախքան սույն տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելը:

### ՀԱՎԵԼՎԱԾ N 1

Եվրասիական տնտեսական միության  
«Հեղուկ և գազանման ածխաջրածինների  
փոխադրման համար նախատեսված  
մայրուղային խողովակաշարերին ներկայացնող  
պահանջների մասին» տեխնիկական  
կանոնակարգի (ԵԱՏՄ ՏԿ 49/2020)

### ՑԱՆԿ

մայրուղային խողովակաշարի պահպանման գոտիների  
սահմանների բնութագրերի

Մայրուղային խողովակաշարի օբյեկտի (կառույցի) անվանումը	Պահպանման գոտու սահմանների բնութագրերը	
	տեղադրությունը	չափը
1. Խողովակաշար	զուգահեռ հարթությունների միջև ընկած հողամասի վրա	խողովակաշարի առանցքից յուրաքանչյուր կողմից առնվազն 25 մետր*
2. Մեկ տեխնիկական միջանցքում զուգահեռ անցկացված երկու և ավելի խողովակաշարեր	հարթությունների միջև ընկած հողամասի վրա	տեխնիկական միջանցքի յուրաքանչյուր կողմից ծայրային խողովակաշարի առանցքից առնվազն 25

\* Հայաստանի Հանրապետության համար՝ գյուղատնտեսական նշանակության հողամասի վրա խողովակաշարի պահպանական գոտու չափը՝ յուրաքանչյուր կողմից խողովակաշարի առանցքից առնվազն 15 մ:

Մայրուղային խողովակաշարի օբյեկտի (կառույցի) անվանումը	Պահպանման գոտու սահմանների բնութագրերը	
	տեղադրությունը	չափը մետր**
3. Ստորջրյա անցուղի	ջրային մակերևութից մինչև հատակի ջրային տարածություն ձգվող տեղամասի վրա, որն ընկած է զուգահեռ հարթությունների միջև	յուրաքանչյուր կողմից ծայրային խողովակաշարերի առանցքից առնվազն 100 մետր***
4. Պոմպակայան (վերամղող կայանը), ճնշակայան, գազաբաշխիչ, գազաչափիչ կայաններ, գազի սառեցման կայան, մայրուղային խողովակաշարի հեղուկ ածխաջրածինների փոխաբեռնման օբյեկտ, մայրուղային խողովակաշարի օբյեկտների պահեստարանային հավաքակայան, հեղուկ և գազանման ածխաջրածինների չափման հանգույց, հեղուկ ածխաջրածինների ընդունման-հանձնման կետ, նավթի տաքացման կետ, լցման կամ թափման էստակաղներ, գազանման ածխաջրածինների	փակ գծով սահմանափակված հողամասի վրա	համապատասխան օբյեկտի տարածքից առնվազն 100 մետր՝ բոլոր կողմերից

\*\* Հայաստանի Հանրապետության համար՝ գյուղատնտեսական նշանակության հողամասի պահպանման գոտու չափը մեկ տեխնոլոգիական միջանցքում անցկացված երկու եւ ավելի խողովակաշարերի համար՝ տեխնիկական միջանցքի յուրաքանչյուր կողմից ծայրային խողովակաշարի առանցքից առնվազն 15 մ:

\*\*\* Հայաստանի Հանրապետության համար՝ ստորջրյա անցուղու համար պահպանման գոտու չափը՝ յուրաքանչյուր կողմից ծայրային խողովակաշարերի առանցքից առնվազն 50 մ:

Մայրուղային խողովակաշարի օբյեկտի (կառույցի) անվանումը	Պահպանման գոտու սահմանների բնութագրերը	
	տեղադրությունը	չափը

ստորգետնյա պահպանման օբյեկտի վրա ճնշակայանով հրապարակ

5. Խտուցքի պահպանման ու ապագազավորման համար նախատեսված տարողություններ, հողամասի վրա հեղուկ ածխաջրածինների թողարկման համար նախատեսված հողամբար	փակ գծով սահմանափակված	նշված օբյեկտի տարածքից առնվազն 100 մետր՝ բոլոր կողմերից
--	------------------------	---

Ճանապարհորդություն: Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների օրենսդրությամբ թույլատրվում է պահպանման գոտիների այլ, սակայն սույն ցանկում նշված արժեքներից ոչ պակաս չափերի սահմանում:

## ՀԱՎԵԼՎԱԾ N 2

Եվրասիական տնտեսական միության  
«Չեղուկ և գազանման ածխաջրածինների  
փոխադրման համար նախատեսված  
մայրուղային խողովակաշարերին ներկայացնող  
պահանջների մասին» տեխնիկական  
կանոնակարգի (ԵԱՏՄ ՏԿ 49/2020)

### ԿԱՐԳ

Մայրուղային խողովակաշարի կազմության մեջ չմտնող օբյեկտներից,  
շենքերից ու շինություններից մինչև մայրուղային խողովակաշար  
նվազագույն հեռավորությունների սահմանման

1. Սույն կարգը կիրառվում է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) տարածքներում և պարտադիր է համարվում պետական իշխանության մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, մայրուղային խողովակաշարերով զբաղեցված հողատարածքներին կից հողատարածքների սեփականատերեր, տիրապետողներ կամ օգտագործողներ հանդիսացող կամ բնակարանաքաղաքացիական և արտադրական նշանակության օբյեկտներ, ինժեներական, տրանսպորտային և սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտներ նախագծող իրավաբանական և ֆիզիկական անձանց համար:

2. Մայրուղային խողովակաշարի կազմության մեջ չմտնող օբյեկտներից, շենքերից և շինություններից մինչև մայրուղային խողովակաշարն ընկած նվազագույն հեռավորությունը հարկավոր է կիրառել հետևյալի նկատմամբ.

ա) առանձին շենքեր ու շինություններ՝ դրանց մերձակա դուրս ցցված մասերից.

բ) քաղաքների և այլ բնակավայրերի շենքեր ու շինություններ՝ դրանց մերձակա դուրս ցցված մասերից.

գ) արդյունաբերական ձեռնարկություններ, երկաթուղային կայարաններ,



օդանավակայաններ, ծովային և գետային նավահանգիստներ ու նավամատույցներ, ծովերի ջրատարածքում տեղակայված նավթագազային կառույցներ, հիդրոտեխնիկական կառույցներ, այրվող և դյուրավառ նյութերի պահեստներ, արտեզյան ջրհորներ՝ դրանց պատվարների մերձակա դուրս ցցված մասերից.

դ) երկաթուղային գծեր՝ լիրաթմբի ստորոտից կամ խողովակաշարի կողմից փորվածքի եզերքից, սակայն ճանապարհի ճյուղավորման գոտու սահմանից առնվազն 10 մ հեռավորության վրա.

ե) ավտոմոբիլային ճանապարհներ՝ լիրաթմբի ստորոտից կամ հողային պաստառի փորվածքի եզերքից.

զ) կամուրջներ՝ կոների ստորոտից:

3. Մայրուղային խողովակաշարի կազմության մեջ չմտնող օբյեկտների մոտիկությունը խողովակաշարին հարկավոր է որոշել այդ օբյեկտների արտաքին սահմաններով անցնող ուղղահայաց հարթությունների և խողովակաշարի առանցքի միջև ամենակարճ հեռավորությամբ (խողովակաշարերի զուգահեռ անցկացման դեպքում՝ խողովակաշարերից յուրաքանչյուրի առանցքից):

4. Մայրուղային խողովակաշարի կազմության մեջ չմտնող օբյեկտների մոտիկությունը մայրուղային խողովակաշարի այլ օբյեկտներին հարկավոր է որոշել այդ օբյեկտների արտաքին սահմաններով անցնող ուղղահայաց հարթությունների միջև ամենակարճ հեռավորությամբ:

5. Մայրուղային խողովակաշարի կազմության մեջ չմտնող այլ օբյեկտներից մինչև հեղուկ ածխաջրածինների փոխադրման համար նախատեսված խողովակաշարը նվազագույն հեռավորությունները պետք է ընդունել հետևյալի համար.

ա) առանձին շենքեր ու շինություններ, քաղաքների և այլ բնակավայրերի շենքեր ու շինություններ, կոլեկտիվ այգիներ, ամառանոցային և քրթեջային ավաններ, առանձին արդյունաբերական ձեռնարկություններ, անասնաբուժական ֆերմաներ, ջերմոցային բուսաբուծության, գյուղատնտեսական արտադրանքի մշակման և պահման ձեռնարկություններ, օգտակար հանածոների մշակման բացահանքեր, 20 միավորից ավելի ավտոտրանսպորտային միջոցների համար նախատեսված փակ և բաց կայանատեղեր, մարդկանց զանգվածային

